18. ԱԼԱՄ ԹԱՔԱՎԵՐԸ

Ինում ա, չինում մին շատ մրեծ, անըմը աշխարքավրս մին եր իլած թաքավեր։ Էտ թաքավերին անըմը Ալամ ա ինում։ Ալամ թաքավերը մրեծ երգյիր, շատ զորք օնար Հընդըստանա սահմաններումը, ինքն էլ ժողովուրթասեր ար։ Ժողովուրթն էլ ուրան ար սիրում։ Թըշնամին մուտացած վախտը ժողովուրթը թողում չար, վրեր նի մընի ուրանց երգյիրը, յա ուրանց թաքավերին վրեննը փոշ նի մընի։

Ալամ թաքավերը հալա տրեսած չար, վեր թշնամին վրեննը տինի ուրան վրեղումը։ Նա սիրում ար ուրան հայրենիքը, ուրան ժողովուրթը։

Շատ վախտ Ալամ թաքավերը շորերը փոխած քինում ար ուրան ժողովուրթին մաչը ման կյում, տրեսնա ժողովուրթը հո՞ւնց ա ապրըմ։

Մին դոնըմ էլհա շորերը փոխած, ուրան վեզիրներին նհետ քյինում ա, վեր ուրան երգյիրին սահմաննին տրեսնա, ժողովուրթին տրութունը գյիդա։

Հունցու ամման վախտ, էս դոնըմըն էլ ուրան խաթուն անըմավեր կընգանը նստրցընում ա կահին յրան, վեր միչև ուրան կյալը ղեկավարի։

Շատ ըն քյինում, թա խրեգյ ըն քյինում, շատը նան խըրեգյը ուրանք ըն գյուղում, օրերան մին օր հասնըմ ըն ուրանց երգյիրին սահմաններին։

Ալամ թաքավերը ուրան վեզիրներան մինին՝ Թուրամին, զարկըմ ա մին մոտի շենում քըշերը կընալու տըեղ քիթնի։ Թուրամը միչև տափը կլոխ տալավ օզըմ ա, թա քյինի, Ալամ թաքավերըն ասըմ ա. — Թուրա՛մ, տըես, լոխճան քյասիր տոն կքըթենաս հա՞...

Թուրամն ասըմ ա. — Թաքավերն ապրած կենա, ծառա յըմ հրամմանիտ։

Մըհեկ թաքավերին թողինք ըստըեղ, տեսնանք Թուրամը թո՞ր ա քյինում։ Ըտեղ մին մոտիկ շեն կար բաղերի, արտերի մեչին զոռավ ար ըրտում։

Թուրամ վեզիրը քըշերվա կըեսին ման կյալավ կյամ ա ըտեղ, վերչը մին խեղճ, պառավ կընգա ճարում։ Էտ պառավ կնեգյը վեչ խոխա օնար, վեչ էլ մարթ։

Թուրամը ըտրան ասում ա. — Ա՛ նանի, ասծու խեղճ մարթիքըն ընք, ղարիբ տըեղա եկած, տոն չօնինք, տեղ չօնինք, թող էս քըշեր տանըտ կենանք, հիշքան քըրեհն ա, կըտանք։

Պառավըն ասըմ ա. — Դե, վերթի, ղոնաղըն ասծունն ա, ամմա հի՞նչ արած, վըեր ծըեզ հարմար տոն, տըեղ, յորղան-դոշակ, հաց նան ճուր չօնինք։

Թուրամ վեզիրն ասըմ ա. — Նա՛նի, վեչինչ, մունք քու ասած մարթկանցան չընք, թաքյ լըհա էս պուճուր օթախը ինի, մին քյունշում յոլա կքյինինքյ։

Պառավըն սուրը եր ըծելավ ասըմ ա. — Էն Ալամ թաքավերին արևը, էն իմ մադար տըղիս արևը, վեր կորալ ա վրեննավ-ծրեռքավ, տըեղ չօնիմ, հնարը-ճար չօնիմ, ապրուստ չօնիմ, յըես մին խըեղճ կնեգյ ըմ։

Թուրամ վեզիրը ընդրա խոսկը շաքյարավ կըտրելավ ասըմ ա. — Վեչինչ, նա՛նի, մունք քյըեզ հաց, փող, հինչ ասիս կտանք, մինակ թող էս քըշեր օշաղիտ կոխկին կենանք, էքյուծ ուռութանա էլհա կըքյինինքյ։

— Ա՛ վերթի։ դե վեր իտի յա, եկեքյ, ամմա ավել-պակասը կբախշիքյ։

Թուրամը քյինից Ալամ թաքավերին կոշտը, լոխ նաղլ ըրավ։ Մըթնըքըշեր ար։ Ընդրանք մին թաՀրավ եկին էտ պըռավին տանը քըշերը կըենան։ Պառավը գյուդում չար, թա ըտահանք հուվ ըն։

Ալամ թաքավերը ըսկսից պըռավին նհետ զուրուց անիլը։

— Ա՛ մար, էտ խե՞ տըղա, ախճիդյ չօնիս, վեր քյըեզ պահին, էսքան քյասիր չի ինիս...

— Ա՛ վրեննը պարի ղոնաղ, մին մադար տըղա յա իլա՛ լ, աստ-
ված քյըեղ էլ պահի, ընդրան էլ։

— Բա տըղատ հո՞ր ա։

— Շուտանց ա կորալ, դյուդում չըմ սաղ ա՞, սեյրու վա՞, մի-
նա՛կ քրշեր, ցիրեկ, ըրտասունքըս ըշկերիս ասծծուն աղոթկ ըմ
անրմ, վեր բալիս չարից, փորցանքից հրեռու պահի, վրեննը քարին
նի չի կյա, էն սուրբ Սարքիսին ծիյին վրեննին տակին բալիս թըշ-
նամիքը փըչանան, բալաս էլհա սաղ-սըլմաթ կյա ուրա՛ն հորը
հանդյած օջաղը էլհա վառի։ Դե այանը ծրեզ մատաղ, ա ղունուղնե,
խոխաս հա՛լա՛ ջահիլ ար, քըսան տըրեկան, եշողը գյուդում ար, թա
մին սար ա ընդեղ կաղնած, թեգյունքը լեն, ճակատը լեն, իրեսը
ղա՛շանգյ, հենց ար լհա՛ մին թա՛զա՛ պլլորա՛ծ լուսնինյգա՛ ինի, աշկերը
սև-սև, ասիս լհա՛ հաղուղի դյլա՛, եշուղըն ասըմ ար. «Ներա՛կ քու
մո՞ր, դե մըհեկ հոր ա՞, ինձ տո, քյըեզ տամ»։ Մարթս էլ խոխիս
խրտեսն առած մրեռա՛վ։ Մրոնելիս էլ ասից. «Ա՛ կընեգյ, խոխիս
աշկաթող չանիս, լավ կպահիս», ասելըն նան էն անմեղ հոքին փը-
չիլը մին ըլա՞վ։ Ցրես նան իմ նախշուն բալաս, իմ էն սարերի ար-
ծիվըս, մընացինք մինակ։ Հիշքան կարըմ ի, հիշքան օժս պատում
ար, օրիշի հետի կործ ընելավ բալիս պահըմ ի։

Աստուծ ծրեզ էլ դյանք տա՞, մրեր Ալամ թաքավերին էլ, քյա՛-
սիբներան օխտը տարով խարջ չի յոր օնըմ, միչև ընդրանք պատառ
հըրուատանան էն միներին հասնին։ Դե, յըես էլ չըմ խարջ տըվալ,
իտի ապրում ինք բըլես նհետ։ Հենե էն պըտրհանըմը մին ղա՛շանգյ,
մին հուրուփա՛ռի ըխճըկա պատկեր կա, հի՞նչ ախճիգյ, մին լուսնըն-
գյա՞, մին մարալ-ջեյրա՞ն... Էտ ախճիգյը ապրըմ ա օխտը ծովի
մեչի մին պուճուր ցըմաքում, ուրա՛ն ղուլլուղչոցավը, ուրա՛ն գյա՛-
դոցավը, ղարավուլչոցավը, ուրա՛ն պալատումը։ Ասըմ ըն, թա
շատ տըղերք ըն քյինա՛ցա՛լ, թա էտ ախճիգյը օղին, լա՛վ-լա՛վ քաջ
տըղերք, ամմա էտ ախճիգյը վեշ մինին հավան չի կացալ, հըրամմա-
յալ ա, լոխճին նի յըն ածալ ծովը։ Բալաս ըշտըղան-ըշտեղ էտ պատ-
կերը տեսնում ա, սիրահարվում։ Մին օր բալաս եկավ, աշկը-ունքը
յըրա պերած, ուրուր տըված, վեչ խոսում ա, վեչ ծրծաղում, լհա՛
ղու ըրած ա՞խ ա քաշում։ Մին առավոտ էլ ինձ մնաք պարով ասից,
քյինից։ Էն քյինիլըն ա, վեր քյինից։ Էն օրանը ետը վեչ խաբար
կա, վեչ կինի։ Մընացալ ըմ իստի խրեղճ, անդեր-ընդերու, օրվան
հացըս ղոռավ ըմ ճարըմ։

Էտ պառավ կնեգյը ուրա՛ն տըղին նաղլը ըրավ, պըրծավ, էլհա
ախ քաշից, ըրտուսունքնին չուրացած իրեսան սրտից, ետնան եր

կացավ, քյինից պըտըրհանան էտ պատկյերը պերավ, նշանց տըվավ թաքավերեն։ Ալամ թաքավերը մին լավ եշից էտ պատկյերին, ետավ ասից. — էս հի՞նչ հրաշկ պատկյեր ա, սա հողածին ա՞, թա՞ երգյինքան ա եր եկալ։ Ըստրան լայըղ հո՞ւ կինի՞...

Ալամ թաքավերը մըթկըմը տիրավ, վեր հինչ էլ ինի՞, էտ ըխճըկանը ուրան տըղին հետի օղի։ Ետնան մին հափուռ վըեսկե փող տըվավ էտ պառավ կընգանը, քաշվից մին անգյուն։ Թաքավերին գյարան փըռեցին ընդրա հետի, նա յրան թեքյ ընգավ, ամմա կարից վեչ աշկը հոփ օնի, քոն ինի։ Հաալա լուսը պեցված վե՞չ, թաքավերը ուրան վեզիրներին նհետ պառավին տանան քյինից։ Պառավը էտ փողերավը լավ տըներ շինից, լավ ապրուստի տար տըեռավ, գյուդում ար, թա տըղան կյալու յա։ Ալամ թաքավերը էլ վեչ մին տըեղ վըեննը կախ չըրավ, վեչ մին տըեղ չի քյինից, թուշ քյեցավ ուրան պալատը, կահին յրան նստից։

Նա քըշեր-ցիրեկ մըտածում ար, թա կործը հո՞ւնց փըռնի, վեր ամալ կյա, վեր վերչը լավ ինի։ Նատ քնենքյ ընելանը ետը, ուրան կոշտը կանչից ուրան մադար, աշկին սըվըսիպտակ՝ Ալմա անըմավ տղին։

— Ա՛ վերթի, անգուճ կալ, աշխարքըմըս մահ կա, մըեռնիլ կա՞, վեչ մինը ըտրանա կարիլ չի փախչի, եք քյըեզ փըսակիմ, քանի հալա աշխարքըս ծըեռքիս ա, քանի հալա ծըեռքըմըս ղըվաթ կա, զոռ կա՞։ Քու հասակըտ էլ հըսալ ա, օգըմ ըմ տըեսնամ քու հըրսանիքըտ, օգըմ ըմ թոռներ տըեսնա՞մ... Քյըեզ հետի մին անընման ախճիգյ ըմ ճարալ... Տուրըդի ընդրան հարսնացու յոր օնիս, նհետը փըսակվիս։

Էտ ըսելանը ետը տըղին նշանց տըվավ էն պատկերը, վեր էն պառավ կընեգյը ուրան ար տըվալ։

Տըղան վեր էտ նկարը տըեսավ վե՞չ, խրեգյ մնաց, թա կյիժվի։ Ուրան մին թարհրավ պահից, միչև տափը հորը առաչին կլոխը քըշըցըրավ, սուս ու փուս տուս եկավ։ Հարը դաստի դյիդաց, վեր տըղան ռազի յա, ամմա հըմանչում ա ասի։

Էն մին օրը Ալման քյինից թաքուհի խաթուն մորը կոշտը։ Հորը ասածնին լոխ նաղլը ըրավ, ետնան մորը ղաչանք ըրավ, վեր հորն անա յոր օնի էն ըխճըկանը պատկերը, պերի ուրան տա։

Թաքուհին էտ պատկյերը եր կալավ, տըեսավ, էտ ըխճըկանը սիրից, հունց վեր ուրան հըրսնացուին, ետավ տարավ տըվավ տըղին։

Ալման քըշեր-ցիրեկ քոն չօնար, վեչ հաց ար օտըմ, վեչ ճուր խմըմ, օրկանցօր մաշվում ար, էն պատկերին եշելավ նա քնենքյ

ար անում, թա տրեսնաս էս ախճիգյը ըշտե՞ղ ա՞, երգյինքան եկած ա, թա հողածին ա։

Մին օր էլ թաքավերը կանչից տըղին, ասից.— Ալմա՛, վերթի, դե հըզըրվի, վեր քյինիս ման կյաս, հըրանըցուիտ ճարիս, պերիս։

Ալման օրախութունան գյուդում չար, թա հի՞նչ անի։ Կըլոխը քաշ քրցից, հունցու խոնար ծառա, հորը աչ ծըեռքը պաչից, տուս եկավ։

Էտ օրը Ալման, հորը խաղնա, դափնա օներ, էտ խաղնիցը եր կալավ շատ վըեսկե, անկյին քարեր, զենքը-ղըրահ, մին լավ ծի, մարն էլ հրամմայից լավ պաշար պըդրաստին։ Ետնան Ալման եկավ հորը կոշտը, հորը օրթնանքը ըստանա։

Հարը օրթնից տըղին, համ էլ ասից.— Ա՛ վերթի, ճընապարըտ պարի ինի։ Մըեղ մըտատ քըցիս վեչ, համ էլ մըտատ քըցիս վեչ, վեր տու թաքաժառանգյ ըս։ Խոնար կը կենաս, լավ անըմ կհանիս, թաքավերին տըղին լայըղ անըմ։ Մին կործ վեր օղիս փըռնիս, օխտը չափի, մին կըտրի, առաչ մին լավ մըտածի, ետավ ըրա։ Տու մինակ ըս քյինում, մըեր օշաղին օրենքյը իտի յա, վեր մին պեն հիշտ ինի, տըժեր ինի, հախտիս, թա հաշտվիս, մինակ տու քու օժավըտ անիս։

Հարը օրթնելանը ետը, թաքուհի մարը օրթնից, արտասունքը աշկերըմը, ասից. — Ա՛ բալա, թող իրեսըս տինիմ քու վըեննիտ տակին։

Տըղան պըցըրցըրավ մորը, ասից. — Ա՛ մար, լաց մի ինիլ, մինակ աղոթկ ըրա ինձ հետի։ Մարը տըղին թշերան պաչից, Ալման մին էլ մուտացավ հորը ծըեռքը պաչից, մորը խըտետն ընգավ, մարը պըչպըչորից տըղին կըռըղնոտ մազերը, ճընապար տիրավ։ Ծառեքը չորս ղոլավը տըեռած տուս եկին պալատան ընդրան միչև քաղաքին գըրբըզան տարին, ետ եկի՞ն։ Ալման քյինում ա, քյինում, ինքն էլ չի գյուդում, թա ըշտեղ, վերչը մին օր կյամ ա, հըսնում մին հենց տեղի, ըշտըղան իրեք ճընապար ա ըսկըսում։ Էտ իրեք ճընապարին պըժանման տըեղը նստած ար մին պառավ մարթ։

Ալման ընդրան ապրյոր տըվավ, ասից. — Պա՛պի, պարով։

— Աստծու պարին, պարով, հազար պարի յըս եկալ, ա՛ բալա։

— Պա՛պի, էս ճընապարնին ըշտե՞ղ ըն տանում։

— Բա՛լա, էս ճընապարնին հիշքան համ էրգյան ըն, համ անծանոթ, էնքան էլ էրգյան պատմութունն օնին։ Տրե՞ս, էս մինը առաչին ճընապարն ա, էս ճընապարը տանում ա դիրի օխտը ծովին հուրու-փարին։ Էրկունշի ճընապարը տանում ա կյերի մարթկանց աշխարքը, իրեքինշի ճընապարը տանում ա դիրի մըթեն ծըմակնե,

խոր-խոր ծորեր։ Առաջին ճընապարավը քյինացալ ըն շատ շատերը, ամմա ետ չըն տրեռալ։ Երկունջի ճընապարավը քյինում ըն, քիթ-նին կորած կյերիներին։ Քու պապ, շատ կըռվարար մարթ ար, նա բաղի վախտ հախթում ար, բաղի վախտ էլ կործը տանիլ ար տամ։ Վերջի դոնըմը կարից վեչ հախթի, ուրան զորքը սաղ կյերի քըցից, ինքըն էլ էտ ճընապարին ըսպանվից։ Հենե հա՞, ընդրա կյըրեզմանը, տրե՞ս, յըրան փոշ ա փըսալ։ Իրեքինջի ճընապարը տանում ա դիբի էս աշխարքաս զըրկված, ուրան գյանքումը մին լավ օր չըտեսած մարթիքյը։ Էտ մարթիքյը կոզի մին ծըետ էլ չըն ըսպանալ, կոզի մին մըրչեմնը էլ չըն կոխ տրվալ, ամմա չար մարթի ծըեռքա, չար մարթի լուզվա փախալ ըն, ընգալ խոր-խոր ծորեր, արևին լուսին կարոտ, գյանքա զըրկված, հիվանդ, էտ ծորերըմը ջանավարներին ճանգյըն ըն ընգալ։

— Շունրակալ ըմ, պա՛պի, յըես պիտի քյինիմ էն օխտը ծովին մեչին էն աննըման ըխճըկանը հետան։

— Դե, ա՛ բալա, քյըեզ հի՞նչ ասիմ, կըլոխտ շատ օյին ա կյալու, տու ջահիլ ըս, ջահիլին կըլխումը հալա կյիժ քամի յա ընում, տու կարիլ չըս էտ կախարթ ըխճըկանը պիրիս, տու հի՞նչ ըս գյուդում ընդրա կըլխըմը հի՞նչ կա՞։

— Չէ՛, պա՛պի, յըես պիտի քյինամ, վեր մըեռնիմ էլ պիտի քյինամ։

— Դե, քյինա, բալաս, աստված քյըեզ նհետ։ Ամմա տրեսնում ըմ շատ ըս նըղացած, եք ինձ անգուճ կալ, ըսօր մընա մըեր տանը, էքուծ ըռավոտը շուտ կըքյինիս։ Հենե՞ ընդեղ ժողովուրթը հըվաքված առըտուր ա անըմ, ընդեղ բազար ա, միկա քյինի շոռ եք, տրես ընդեղ հի՞նչ կա, հի՞նչ չիկա, հի՞նչ պեներ կա, վըեր հալա տու տրեսալ չը՞ս։

Ալման ռազի կացավ, քյինից բազար։ Ընդեղ թազա պեներ տրեսավ, թազա ըպրընքնե, թազա մարթիքյ, լհա օզըմ ար, թա բազարան տուս կյա, տրեսավ մին քյասիբ մարթ, մին ղաշանգյ յաշիգյ շըլակած ծրեն ա տամ.— Այ՛ լավ յաշիգյ, ա՛յ լավ յաշիգյ, համ առնողը փրեշման, համ ծախողը փրեշման, լավ յաշիգյ։

Ալման մաթ մընացած հըրցրավ.— Ա՛յ մարթ, էտ հի՞նչ յաշիգյ ա, վեր համ առնողն ա փրեշման, համ ծախողը, բա իտի առըտուր կինի՞... դե, հինչ կինի՞, կինի՞ պեր առնիմ, կըտանիմ տամ էն պապին, վեր քըշերս տանը կենալու յըմ։ Դե ասի տրեսնամ քա՞նի յա՞։

— Հունցու օզիս, ա՛ շահիլ։

Վերջը Ալման մին վրեսկե յա տամ, յաշիգյը յոր օնրմ, տանրմ էն պառավ մարթին տոնը։

Սաղ օրը յաշիգյը պեցին վեչ։ Ուրուգյունը լհա նոր ին նի մըտալ տեղերը, վեր էտ յաշիդյին զրնգոցը եկավ, յաշիգյը պեցվից, ընդրա մեչան մին պառավ մարթ տուս եկավ, բոյը՝ մին մետր, մրրոքը՝ էրգյան, էրկու մետր, մին կացին էլ կյոտկըմը։ Ալման նան էն պառավ մարթը խիլլա վրեսեցին։

Ամմա էտ մարթը հանգարդ մուտացավ Ալմին՝ ասից. — Իմ անրմրս Կուպլիկ ա, յրես քյրեզ ծառա, հինչ ասիս, հինչ օժատ վեր ա, յրես կկադարիմ։

Ըտեղ Ալման տրեսավ, վեր ըտրանա ջամբար չիկա, խոսկ տրվավ, պայման կասեցին, վեր ուրուր նհետ լավ ինին, ուրուր հավագարիմ ինին։

Էն մին օրը Կուպլիկը նան Ալման ճընապար ընգին, քինացին։

Կուպլիկը համ էտ ըսեճրկանը տրեղն ար գյուդում, համ էլ ընդրան մին հետ տրեսալ ար։

Ըտրանք շատ ըն քյինում, խրեգյ ըն քինում, հասնրմ ըն էտ ըսեճրկանը պալատին։

Կուպլիկն ասրմ ա. — Ա՛լմա, յրես քյրեզ սրվրրցընիմ, թա տու հունց բիդի էտ ըսեճրկանը քու մրեթկըտ հրսկրցընիս։ Վեր պրցրանաս պալատը, էտ ախճիգյը դաստի գյիդալու վա, վրեր տու ուրան ուղելի յրս եկալ։ Նա հրամմայելու ա ուրան ծրոոտանցը, ասի. «էտ շահիլ տրղին տարիք պատիվ տվիքյ։ Ծառեքը գյուդում ըն, թա էտ խուսկերքավը նա հի՞նչ ա ասրմ։ Քյրեզ պրցրրցընելու յրն լոխճան պրեցուր պալատը, ընդրղան քյրեզ ծովն ըն քրցելու։ Նրհախ տրեղան վեր տու մրեռնիս վեչ, կասիս. «Շունրակալ ըմ, յրես պատիվ չրմ օզրմ, յրես քյրեզ ըմ օզրմ»։ Վեր իտի ասիս, նա կդյիգա, վեր տու ուրան օզելի հետի յրս քյինացալ։

— Լավ, Կուպլիկ, իտի կասիմ։

Ընդրանք նի մրտին պալատը, մարմար փալաքյաններավը պրցրացին ըսեճրկանը օթախը։ Հալա միչև էտ, ըսեճրկանը ծառեքը ասալ ին, վեր մին տղա յա կյամ, էտ ախճիգյն էլ թողալ ա, վեր կյա։

Ալման էտ արմաղ-շարմաղ ըսեճրկանը վեր տրեսնում ա, օզրմ ա, թա օշը տանի, եր ընգնի, գյուղում ա, թա ըրազրմն ա տրեսնում։

Էտ ախճիգյը վեր տրեսնում ա իտի յա, հրամմայում ա ուրան ծառաներին, ասրմ. — Տարեք, էտ երիտասարթին պատիվ տրվեք։

Ալման կարրմ չի վեչ մին պեն ասի, լհա աշկը քրցած էտ ըսեճրկանը աշկը, մրնում ա սառած, կաղնած։ Ծառեքը ըտրան պրցրրցը-

նում ըն էն պեցուր տրեղը, ընգրղան ծովը քրցո՞ւմ։ Կուպլիկն էլ էն սրհաթը ուրՈՒն ծովըն ա քրցրմ, մին թՈՒհրՈՒվ Ալմին ծովան հանրմ, տանրմ պալատին քրշտին մին կանանչ տեղ տրնում։

Վեր օշը կրլոխրն ա կյամ, Կուպլիկն ասրմ ա. — Բա յրես քյրեզ ասեցի վե՞չ, հինչու յրես ասրմ, ինդի ասի...

Կուպլիկը իտի յա ասրմ. ետնան Ալմին մին լՈՒվ չրմփալախ տամ։

Ալման ասրմ ա. — ԼՈՒվ, էլ մրտաս քրցիլ չը՞մ։

— Դե տրես, Ալմա, էս դոնրմ վեր քյինիս, կասիս, հինչու յրես քյրեզ ասալ ըմ, թա չէ, նա թՈՒզՈՒգՈՒն քյրեզ ծովը քրցիլ կտա։

Ալման մին էլ պրցրացավ էտ ըխճրկանը պալատը։ Ծառեքը մին էլ քյեցին էն ըխճրկանը ըսեցին։ Ախճիգյը հրրամման տրվավ, վեր թողին կյա։ Ախճիգյը զարմացալ ար էտ տրղին ղոչաղ ինիլան, ընդրա սրերտը սեր ար ընգալ։

Ախճիգյը ընդրանա հրրցրավ, թա. — Հի՞նչ ըս օզրմ իմ պալատաս, բՈՒլքյաս իմ ղուլլուղչիներաս մինին ըս օզում, բՈՒլքյաս վրեսկե յրս օզրմ։

Ալման էս դոնրմ իրեսը պեց ասրմ ա. — Յրես համ շատ վրեսկե օնիմ, համ էլ շատ ղուլլուղչի կա մրեր պալատումը։ Յրես եկալ ըմ քյրեզ ուզելի հետե։ Լրսալ ըմ, թա լոխճին ծովը քրցիլ ըս տամ, ամմա յրես եկալ չրմ, վեր ծովըն ընգնիմ, յրես եկալ ըմ ասիմ, վեր քյրեզ սիրրմ ըմ, եկալ ըմ քյրեզ տանիմ։

Էտ ախճիգյը էլ կարրմ չի մին խոսկ ասի, տրեղան եր ա կրենում Ալմին ծրեռքան փրռնում, անրմը հրրցրնում ետնան ասրմ. — Ալմա՛, վեր տու ինձ սիրրմ ըս, պիտի ինձ նհետ ըստեղ մրնաս, իմ օխտը ծովերիս թաքավերը տրեռնաս։

Ալման «չէ» յա ասրմ։ — Յրես հայրենիք օնիմ, թաքավեր հՈՒր, թաքուհի մար օնիմ, ընգրանք ինձ ըն ըսպասում, ինձ ա ըսպասում թաքավերին կահը, մրեր ժողովուրթը։

Ախճիգյը ռազի յա կրենում։ Կուպլիկին կանչրմ ըն պալատը, մին լՈՒվ օթախ տամ։ ՈՒրՈՒնք էլ պալատին լոխճան լՈՒվ օթախներրմը օխտը օր, օխտը քրշեր հրրսանիք ըն անրմ։

Ըտրանա ետը պադրաստվում ըն՝ ճրնապարվին։ Ախճիգյը կանչրմ ա ՈՒրՈՒն ծրռոտանցը լոխճին, արտասունքը աշկերրմը ասրմ։ — Դե, մնաք պարով, իմ պալատս էլ, կահրս էլ, իլՈՒծ-չիլՈՒծս էլ, լոխ ծրեզ ըմ տամ, յրես քյինում էս քաշ տրղին նհետ։ Դե թա ետավ հի՞նչ կինի, գյուդում չրմ։

Հիշքան էլ ծառեքը ղաչանք ըրին Ալմին, վրեր քյինի վեչ, ամմա Ալման ՈՒրՈՒն ասածը ըրավ։ Ընգրանք հրզէ իլին դիբի ՈՒրՈՒնց տոն։

Շատ քյինեցին, թա խըրեգյ, վերչը հըսին ընդեղ, հիշտեղ էն պառավ մարթը նըստած ար։ Իրեք ճընապարին տըեղը։

Էտ պառավ մարթը մնացալ ար զարմացած, թա հունց ա Ալման էտ ըխճըկանը պերալ։ Նա շընհավեր ա անըմ ընդրանց փոսակը, Ալման ծիյան եր ա կյամ, էտ պառավ մարթին ծրեռքը պաչըմ, մին էլ ծի յըն նստում, քյինում։

Քյինըմ ըն, քյինըմ, վերչը հըսնըմ ըն ուրանց թաքավերոթունը։ Կուպլիկը ճընապարին կորչըմ ա։

Խաբարը տանըմ ըն Ալամ թաքավերին, թա տըղատ կյամ ա, մին հուլու-մալադյ էլ նհետը։ Ալամ թաքավերը օրախոթունան ուրան խաղնին տըռները պըեց ա անըմ ժողովուրթին առաչին։

Խաբար պերողներին մուշտըլուղը անկյին քարեր ար։

Ալման նան ուրան թաղա հարսը կյամ ըն պալատին առաչին կաղնըմ։

Թաքավերը նան թաքուհին տուս եկին ընդրանց տարին պալատ, կըլխըներին վըեսկե, անկյին քարեր շաղ տըվին։ Ժողովուրթը հարուստացավ, լոխ ուրխացին։

Ալամ թաքավերը հրամմայից ուրան վեզիրներին, վեր հըրսանիքի պադրաստոթուն տըեսնան։

Հըրսանիքը ըսկըսվից, շատ ղոնաղնի էլ ին եկալ օրիշ երգյիրներա։ Ըստոլնին ամմեն հինչավ լիգյը, օտել-խըմե՞լ, հինչ ասի՞ս...

Թաքավերին պալատումը ապրում ար Ուրան անըմավ մին վեզիր։ Էտ վեզիրն էլ մին տըղա օնար, անըմը Դևուկ։ Դևուկը վեր տըեսնում ա էտքան կյեղեցիկ հարսին, սիրում ա։ Հենց վեր սիրում ա, ուրան մըթկըմը տինում ա, վեր Ալմին ըսպանի, ինքը հարսին յոր օնի։

Հըրսանիքին իրեքինշի օրըն ար։ Էլհա սաղ ժողովուրթը օտըմ ին, խըմում, քյեփ անըմ։ Էն կանանչ դուզերըմը մին վարար կյետ ար քյինում, կյարունքվա վախտ ար։

Դևուկը միշտ Ալմին քըշտին ար ընում նըստած։

Ասըմ ա.— Ա՛լմա, էս ա իրեք օր ա օտըմ ընք, խըմըմ, մըհեկ էլ եր կաց, քյինինք, մին լավ ծի քըշինք, կերածնիս մարսինք։

— Հի՞նչ ըմ ասըմ, քյինինք։

Ծառեքը լավ-լավ ծիյանք ըն պերում։ Ընդրանք նըստում ըն, քամու նման քըշում, քյինում, համին էտ վարար կյետին կոշտը։

Խիլլա հեռու ին քըշալ։ Ծիյանքը քըրտնընքալ ին։

Ալման ասից. — Դե բոլ ա, ետ տըեռնանք։

Ամմա Դևուկը թողից վեչ։ Ալման ծիան եր եկավ Դևուկըն էլ։

ուրանք քյեցին մին խրեկ ման կյան կյետին քըշտին։ Կյետը շատ վարար ար։ Համին էտ վախտը Ալմին ծիյին կապը պեց ա ընգնըմ, ծին փախչում ա։ Դևուկը ուրան ծին նստում ա, գյվաքյիս թա քյինի Ալմին ծին փրռնի։ Էտ մունուտին էլ խանչալը հանըմ ա, թըխում, Ալմին կըլոխը կես անըմ։ Յետավ ծիյան եր ա կյամ, մեյիղը քյըցըմ կյետը, ինքը շորերը ճըրղոտելավ, կըլոխը թակելավ ետ տրեռնըմ։ Ալամ թաքավերը միչև էտ, տրեսնըմ ա, վեր տըղան կյամ չի՞։ Մարթ ա զարկում հետան, վեր ետ տրեռնան։

Էտ ծառեքը տրեսնըմ ըն, վեր Ալմին ծին խըրխընջալավ ընգալ ա էն դուզերը։ Ըտահանք կըլոխ ըն ընգնում, վեր մին պեն ա պըտահալ, ետ ըն տրեռնըմ թաքավերին ասըմ. թաքավերը մընըմ ա շշկըլված։

Ժողովուրթը ուրուր ա ընցնըմ։

Դևուկին ծառեքը քյթնում ըն, տափին եր ընգած։

Էտ սրտրսոտ լաց ինելավ, մազերը քանդելավ ասըմ ա. — Մունք էրկուսավ ծիյանցը կապան փրռնած ման ինքյ կյամ, բըրղան մին էլ տրեսնանք, մին մարթ կյետըն ընգած, կյետին քըշտի ծառին մին պըերակ ճըղնա փրռնած, օքնըթուն ա կանչըմ։ Ալման ծրեռքը մրեկնից, վեր ազադի, էտ մարթը Ալմին ծրեռքան փրռնից ազադվից, ամմա Ալման ընգավ կյետը։ Կյետը քըշից տարավ։ Էտ մարթը օղից ինձ էլ քաշ տա, տանի քըցի ճուրը, յրես թուրս հանեցի, ընդրա սրերտը կոխեցի։ Նա իտի էլ ընգավ ճուրը։ Յրես էլ գյուդում չի, թա հի՞նչ անիմ, ցավը ինձ էս օրը քըցից։

Դևուկը համ ասըմ ա, համ էլ մազերը քանդըմ, իրեսը ճրպռոտըմ, գյրվաքիս թա սրերտը շատ ա ցավըմ Ալմին հետի։

Ծառեքը ընդրան փրռնըմ ըն, տանըմ թաքավերին կոշտը։

Թաքավերն ասըմ ա. — Օցի ճոտ, իմ թազա փրեսա բալաս հո՞ ա, լոխ ասի, աշկերտ կհանիմ, լուզուտ կըկըտրիմ վեր ծոռ ասիս։

Դևուկը կարից վեչ խոսի, ծառոցը մինը, Դևուկը հինչ ասալ ար, նաղլ ըրավ թաքավերին։

Թաքավերը էլ համփերից վեչ, կանչից դահիճներին ասից.

—Տարեք ըտրան աշկերը հանեցեք, լուզուն կըտրեցեք, քըցեցեք մին նամ, մրթեն տրեղ։

Իտի էլ անըմ ըն։

Ալամ թաքավերը կանչից Դևուկին հորը՝ Ուրան վեզիրին, ընդրա լուզուն նան ծրեռքերը կըտորիլ տըվավ, քըցիլ տըվավ տըղին կոշտը, էն նամ, մրթեն տրեղը։ Հաբրտրղա կարըմ չին ուրուր նհետ խոսին, հաբը կարըմ չար տղին քյոմագյ անի, լհա թավիլ-թավիլ

ար անում տղին վրններին տակին։ Ըտրանք իտի ցավեր քաշելավ էլ մրեռին։

Հրրսանիքին չորսինշի օրը սոքի օր տրեռավ։ Թաքավերը նան թաքուհին սև կյեցին, թաձա հարսըն էլ սև կյեցավ։ Թաքուհին ուրան մաղերը կըտրից, սոքյ ըրավ, վրեղ ածից կըխլին, իրեսը չընդռոտից։

Ալամ թաքավերը ուրան հարուստ պալատումը էն մրեկալ վեղիրներեն նհետ, ուրան կյեղեցկուհի հարսին ուրան ախճիգյ եր կալավ, կահը ընդրան տրվավ, ասից. — Անգուշ տիր, բալաս, մրհեկանց տենը էսքան ցավրդարդանը ետը, յրես շատ ապրիլ չըմ, իմ կահրս էլ, երգյիրրս էլ քյրեզ ըմ տամ։

— Չէ՛, յրես Ալմայից ետավ կարիլ չըմ էս լիգյը պալատներրմը ապրիմ, Ալմայից ետը, յրես օզրմ էլ չըմ ապրիմ։ Տու մրեծ, աշխարքիս տար թաքավեր ըս, կընստիս քու կահիտ հաստատ միչև վերչը։

Իտի յա ասըմ էտ հուրի-փարին, տուս կյամ քյինում պալատին երի քրեթը, ընդրղան ուրան քրցրմ տակը, մրեռնրմ։

Թաքավերին դարդերը մինը հազար ա տրեռնում։

Նաղիր-վազիրնին կարրմ չըն, թա մին խոսկ ասին։ Ալամ թաքավերը էլ ուրան կահին, ուրան թաքավերական թախտին նրստում չի։ Տրղին նան հարսին ամմեն մին մրնուտ մրետը պահելի հետի, ուրան պալատին թաքավերական թախտին յրրան էրկու շատ դաշանգյ ծաղկաման ա տրնում ուրուր կողքի, մեչին կովում վարթեր, ամման մին վարթի յրա մին բուլբուլ, էրկու օցի պոն էլ վարթին քրշտին։

Լհա՜ վրեր բուլբուլը երք ա ասրմ, էտ կովում վարթերրն էլ հանգարդ ըրորվելավ օզրմ ըն ուրուր նի կյան, պրեցվին, էտ սև օցը պոնան տուս ա կյամ, վարթին ճըղներավը պրցրանրմ, թա բուլբուլին կրծի, աղու տա, ըսպանի։ Էտ վախտը Ալամ թաքավերը հինչ դադաստան էլ անելիս ինի, տղին նան հարսին մրետն ա քրցում էտ մրեղավերներին էլ, լոխճին էլ աղադոթուն տամ։

Ջարրն՝ ընդեղ, պարին՝ ըստեղ։